

ԳՐԱԿԱՆ

ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ*)

Գ.

Հայ ժողովրդի բնութագիրը ըստ Ա.-ի. անգոյն դուրս գալու պատճառները. Տիպերի տեսակները և նրանց կապը ժողովրդի հետ. Երևակայական տիպերի մէջ հեղինակի ցուցադրած հայեացքը. Ա.-ի տաղանդը:

Ահարոնեանի ցուցահանած միջավայրի միւս հատուածը՝ Հայ ժողովուրդը ամենահարստահարուած, իրաւագուրկ տարրն է: Երկրագործութեամբ իր կարիքները լցուցանող սօցիալական մի խումբ՝ որ զօր ու գիշեր քրտնաթոր աշխատաւոր է, վարում, ցանում ու հնձում և միշտ էլ մնում աղքատ ու խեղճ: Նրա վաստակը թուրքին ու քրդինն է. վերջիններս անգութ իշխող ու կոզոպտող, հայը խոնարհ ու հնազանդ: Թուրքինն է հայի արտն ու արօտը, արօրն ու գութանը, գեղեցիկ հայ կինն ու աղջիկը, ընտանիքի ու տան պատիւը:

Հայ ժողովուրդը մի անորոշ, բութ, անգոյն մարդկանց ժողովածու է: մի ստրկական հոգով օժտուած զանգուած, որ չունի իր սեպհական ցանկութիւնն ու ազատ հայեացքը, իւր գլխին թափւող ամեն մի անարդարութիւն, իր հետ կատարուած ամեն մի զազիր գործ բնական է համարում. իր անհատական կեանքը նոյն խկ իրենը չէ, այլ տրուած թուրքին ու քրդին որպէս օգտուելու բարիք:

Ի հարկէ այս ընդհանուր գորշ ֆոնից հեղինակը դատել ու դուրս է բերել մի Ռաշիդ, մի Ասօ, մի Մօսի, մի Անդրանիկ և այլն. որոնք ամենաչնչին անարդարութեան դէմ, հեղինակի ասելով, հերոսաբար գիտէին կռուել ու մարդու ամենանուիրականը յանուն գործի զոհաբերել. «րանց մասին չէ մեր խօսքը, որանք հեղինակի հրապա-

*) Տես «Արարատ» 1916 թ. յուլիս—օգոստոս եւ սեպտ.—հոկտ.

րակախօսական-գաղափարների ներկայացուցիչներն են և հայ ժողովրդի հաւաքական հոգեբանութեանը իրենց մէջ ցուցադրող գեղարուեստական տիպեր լինելուց շատ ու շատ հեռու:

Մենք գործ ունենք ընդհանուր մասսայի հետ այդ մասսան մի «կենդանի դիակ» է Ահարոնեանի երկերում: Չկայ հայ ժողովրդի կեանքի առանձնայատուկ կողմերը պարզող, ցեղական գոյնն ու բնութագիրը ցուցադրող ընտանեկան հասկացողութիւնների, կրօնա-բարոյական ըմբռնութեան զրահւորող մասսայ, վերոյիշեալ երեւոյթների հոգեբանական ուսումնասիրութեամբ և գեղարուեստական կապակցութեամբ միայն մեր հեղինակը կարող կլինէր տալ հայ ժողովրդի ամբողջութեան պատկերը:

Միջավայրի ու խաւերի մասին առաջները պարզ են կացուցանում այն, որ Ահարոնեանը տիպեր վերարտադրելու, ստեղծելու մէջ ևս չպիտի կարողանայ յաջողութիւն ունենալ, որովհետեւ եթէ ժողովրդի կեանքը խորն ուսումնասիրած չէ հեղինակը, հետեւապէս և նրա տիպերը, որպէս նոյն ժողովրդի հաւաքական հոգեբանութեան ուսումնասիրութեան արդիւնք, նրա սօցիալական կեանքի բազմատարր երեւոյթները իրենց մէջ ցուցադրող ներկայացուցիչներ, չեն կարող լինել պարզ, որոշ և ուժեղ: Մայր ժողովուրդն ու հարազատ կեանքն են, որ պիտի լցնեն գործելու աւելնող տիպերի դատարկ հոգիները, առաջութիւն, գոյն, ներքնապէս ապրելու խթան տան նրանց, շարժեն մութ, անհասկանալի յոյզերի աշխարհը: Առանց ժողովրդի ու նրա կեանքի ուսումնասիրութեան ամենահանճարեղ հեղինակն էլ չի կարող իր գուրգուրանքի առարկայ, իր ինտիմ յոյզերի հանգրուան տիպերին ապրելու, յարատեւելու, սնուելու հող ու ջուր պատրաստել, նրանց գեղարուեստօրէն ցուցադրող կեանքի շրջանը բուրբել, այնպէս՝ ինչպէս ամենափորձուած այգեպանն առանց հողի յատկութիւնը, բաղադրութիւնը իմանալու՝ չի կարող իր այգում տնկած պատուաստների կեանքը ապահովել: Ահարոնեանի ստեղծագործած տիպերը այս անհրա-

ժեշտ պահանջին բաւարարութիւն չեն տալիս: ուստի և բաւական հեռու են իսկական ժողովրդի թարգմանը լինելուց:

Պարզենք, վերլուծենք իրենց տիպերի ցուցադրած բնութագծերն ու հոգեկան կառուցուածքը: Հեղինակի ստեղծագործած տիպերը իրարից խստօրէն զատող երկու մասի կտրելի է բաժանել՝ երեւակայական և իրական: առաջին խումբ տիպերը հէնց հեղինակը դրել է իր սեպհական աշխարհայեացքը, պատմարմբունումը. նա չի բաւականացել թուրք-քիւրդ և հայ ժողովրդների բնաւորութեանց տենդենցիօզ հակադրմամբ. հայի ծայրայեղ խեղճութիւնը թուրքերի ու քրդերի անգթութիւններից պաշտպանելու համար տալիս է իւր կտրուկ ու դրական միջոցը՝ գործելու կերպը. — պէտք է չարին չարով պատասխանել, ազատութիւնը, թէկուզ մասնաւոր, պիտի գերադասել բռնութիւնից և տառակահայ թշուառութիւնների համար պէտք է վրէժխնդիր լինել: Ահա այս գաղափարները զօրեղ, ազդու դարձնելու համար հեղինակը ամենուրէք մատնանշել, յայտ առնել է ձգտում գործող անձանց արարքների մէջ: Նա տիպերի այս մասը ստեղծելիս միմիայն իւր շեշտած գաղափարների յաղթանակով է տոգորուած: Վէպը թէ պատմուածքը յաջող է տանում այն ձևով, որ այս տիպերը անպայման հերոսաբար մեռնեն, բարոյապէս ու քաջութեամբ յաղթեն. — Ռաշիդը, Ասօն, Մուսօն, Թաթուլը, տիրացու Գրիգորը... բոլորն էլ բարոյապէս յաղթում հերոսական համբերութիւն ու քաջութիւն են ցոյց տալիս: ուստի այս մաս տիպերի մէջ հոգեկան զարգացում, լուծումների անհրաժեշտ հոգեբանական պատճառ չենք տեսնում: Յայտ հանած գծերն էլ մնում են որպէս քարացած մեծութիւններ, հեղինակը չի տալիս նրանց սկիզբը զարգացումը և վախճանը. այս անհրաժեշտ է այն պարզ պատճառով, որ ամեն տիպի ուրոյն դոյնը նրա հոգու ապրումների զարգացմամբ է հանդէս գալիս. ապրումների զուգորդութեամբ ու ներքին պատճառական կապակցութեամբ է, որով տիպը երեւան

պիտի հանի իր միաձոյլ մեծութիւնը. և նրա ամեն մի քայլը, ամեն մի ցանկութիւնը ու գործողութիւնն ու վճիռը, զգուսն ու լուծումները պիտի բղխեն, ծագեն ու յառաջ գան վերոյիշեալ զուգորդուած ապրումների որ և էլ օղակից: Նրան դէպի գործ հրաւիրողը, դէպի ոճրագործութիւն մղողը ներքին այս յոյզերի աշխարհը պէտք է լինի. սրանից դուրս գեղարուեստական տիպը չունի ուրիշ մղումների, դրդիչների աղբիւր: Ահարոնեանի տիպերը շարժւում են ամբողջապէս նրա քմահաճ ցանկութեամբ: Լուծումները Բաֆֆիական են՝ պատահական և ոչ հոգեբանական անհրաժեշտութիւնից բղխած. նա տիպերի հոգեբանութիւնը, առանձնայատուկ գծերը, հակընդէմ կանգնած բնաւորութիւնները միանգամայն անտես է առել: Տիպերից ամեն մինը՝ լինի մարդ թէ կին, ծեր թէ երիտասարդ, աղքատ թէ հարուստ իրենց փոքրիկ շրջապատի համապատասխան, իրենց հոգու պահանջներից բղխող գծերով հանդէս չեն եկել: Ահարոնեանի մօտ նրանք փոխել են իրենց դերերը. ամենքի մէջ խօսողը հեղինակի փիլիսոփայութիւնն է, իր երեւակայութեան ուժեղ թափով գունաւորած: Եւ այս հասկանալի է շնորհիւ այն բանի, որ հեղինակը հակուած է տիպերի մէջ զաղափարական մարտիկին ու աղատութեան զինւորին փառաբանելու և ոչ հոգեբանօրէն ճիշտ և ուժեղ տիպեր վերարտադրելու:

Ահարոնեանի տիպերը անորոշ են, տարտամ, մակերեսային ու միակերպ: Ռաշիդը բարի է ու հէքեաթային, նոյն են Ասօն, Միքօն, Մուսօն, Թաթուլը: Առաջինը հայրենասէր է, ընտանիքի պատուոյ պաշտպան, հարեանների համար կեանքը զոհող, զգայուն և վրիժառու, նոյնն են նաեւ վերջինները:

Այս միօրինակութիւնն ու նմանութիւնը ոչ միայն բնորոշ թոյլ կողմն են մեր հեղինակի երեւակայական տիպերի, այլ և իրական: Նման են Աղատութեան ողին ու Ասլանը, Նկարիչն ու Սուրէնը, Սօֆիլն ու Կլարան և այլն: Տիպերի ցուցահանած գծերը նոյն իսկ ցաք ու ցրիւ են հանդէս գալիս: Նրանք մի միաձոյն ամբողջութիւն չեն

ներկայացնում: մէկը միւսի հետ շաղկապման մէջ չի գնաւում: մէկը միւսից չի բղխում պատճառի ու հետեանքի կապակցութեամբ: Աւելի հետաքրքիր են Ահարոնեանի իրական տիպերը: որովհետեւ այս մասում հեղինակը փոխել է իր ստեղծագործելու բնորոշ ձևը — իրականութիւնը իրական ակնոցով է դիտել ու վերարտադրել: Տիպերի այս խումբը նոյնպէս կարելի է երկու մասի բաժանել՝ բացասական և դրական:

Երկու կարգ տիպերն էլ յայտ են հանում թէ իրենց շրջանի և թէ հայ ժողովրդի ընդհանուր գծերը: Սասունի տիպը մի քանի ուղղութիւններով ընթերցողի առաջ պատկերացնում է հայ տառապած մայրերի մի ահապին բազմութիւն: Գոպէի (Մրրկի Սուրբը) հոգեկան աշխարհի ու բնաւորութեան մէջ ամենայն պարզութեամբ կարգում ենք հայ գիւղացու մեծութեան փորձառութիւնը: բարեացակամութիւնը, դատողութեան սառնութիւն, աշխատասիրութիւնն ու մեղմութիւնը: Տիպերի այս մասի մէջ հեղինակը փորձել է նկարել հայ ժողովրդի հաւաքական հոգեբանութեան բեկորները, ուսումնասիրելով նրանց մէջ այդ բեկորների սկիզբը, զարգացումը և վախճանը: Այս մաս տիպերի հոգեկան զարարութիւնների, վճիռների, գործողութեանց, օճրագործութիւնների պատճառը պարզ է ու գեղարուեստական տեսակէտից հիմնաւորուած: ուստի և այս կարգի տիպերը արժէքաւոր են ու գնահատելի:

Դժբախտաբար Ահարոնեանի իրական տիպերը նրա ստեղծագործութեան շատ աննշան մասն են կազմում և բաւական չեն չեղոքացնելու գեղարուեստական այն պակասութիւնները, որոնց մասին ցարդ խօսում էինք:

Միջավայրի, երգած թշուառութեան, ժողովուրդների ու տիպերի մասին մեր առածները պարզում են մի բան՝ որ Ահարոնեանի տաղանդը միջակութիւն է: խաւերի, անհատների հոգեբանութիւնը հասկանալու, ապրելու մէջ անզօր: միջավայրը վերլուծելու, գեղարուեստական խտացումներ կատարելու և առարկայօրէն վերարտադրելու համար՝ տկար: Տաճկահայ ժողովրդի ու գաղթականների

կեանքը, որպէս բազմազան երեւոյթներով հարուստ միջավայր, կարող էր ամեն մի մեծ բանաստեղծի արժէքաւոր երկեր ու հոգեբանօրէն ուսումնասիրուած տարբեր տիպեր ստեղծելու նիւթ տալ, այնինչ այդ նոյն միջավայրը Ահարոնեանի գրչի տակ մեղմուեց սահմանափակուեց ու միօրինակ դարձաւ, այն պատճառով, որ նա ամբողջ սոցեալական խումբը ուսումնասիրեց իր մէջ առաջ եկած մէկ երեւոյթի՝ ողբի կամ վրէժխնդրութեան տեսակէտից:

Ե. Հայրպետեան

(Նախունակելի)

Յ Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս Ն Ա Զ Ա Ր Ե Ա Ն Յ Ի Շ Ո Ւ Ր Զ Ը *)

Վարսունական բուականներում.

II

Մարտիրոս Սիմոնեանց. Գաբրիէլ Տ. Յոնաննիսեանց.
Անանիա Սուլթան-Նան. Յոնաննէս Քաթանեանց եւ Յոնաննէս Պիտանեանց.

Մարտիրոս Սիմոնեանց Ղազարի Քարվանսարա գիւղից, պատանի հասակից սովորում էր Թիֆլիզ Ներսիսեան դպրոցում: 1858 թուին գեղարուեստ Յոնաննէս Քաթանեանցը վերակացու էր Ներսէսեան դպրոցում և հետեւալ տարին նա ուսուցչութեամբ տեղափոխուեց Ստաւրոպոլի գիմնազիան: Սա իւր հետ տարաւ և Մարտիրոս Սիմոնեանցին, որ այնտեղ աւարտեց գիմնազիան ու 1861 թուին մտաւ Մոսկվայի համալսարանի մատեմատիքական ֆակուլտէտը: Յոնաննէս Քաթանեանի շնորհիւ ուսանող Սիմոնեանցի սնունդը վերցրեց իւր վերայ Մոսկուայի հարուստ Յոնաննէս Ստեփանեան Անանեանցը:

Մոսկուայում ուսանող ժամանակ Մ. Սիմոնեանցը տուել է Հիւսիսափայլին երկու յօդուած: Առաջինը Թարգմանութիւն է ուսեբէնից իւր ժամանակի Իտալական ազատութեան հերոս Զուգէպէ Գարիբալդի կենսագրութիւնը «Գարիբալդու կեանքը» Մարտիրոս Հրաչեայ ստորագրութեամբ:

Միւս յօդուածն է պատասխան Կռունկ ամսագրի մէջ տպագրուած Գարեգին Մուրադեանցին (ապա Մելքիսէդէկ արքեպիս-

*) «Արարատ» սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 713—719.